ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 26 >> հունվար 2021թ. N ՄՈ/32-2021

ք. Արմավիր

<<ԱՐԱԶԱՓԻ Թ. ՀՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի հունվարի 25-ի N ՄՈ/29-2021 և 2021 թվականի հունվարի 25-ի N ՄՈ/30-2020 որոշումները, <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Արևհատ Բազոյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 26.01.2021 14:59:55 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2021 թվականի Հունվարի 26-ի

ՀՄ/N 32-2021 **հրոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Անդամներ՝

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Ա. Խլղաթյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար

Հանձնող՝

Լիանա Գալստյան - <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նախկին պաշտոնակատար

Ընդունող՝

Չինար Կարապետյան - <<Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 26.01.2021 13:17:29 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023